**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ(ԷԱՃ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

25-ը հունվարի 2019թ.
ժամը $12^{30}$

Մասնակցում էին՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

**Քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ», «Ջի Թի Սի» և «Վարդալ ֆարմ» ՍՊԸ-ների*** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. *«Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ», «Ջի Թի Սի» և «Վարդալ ֆարմ» ՍՊԸ-ների* կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1. ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ», «Ջի Թի Սի» և «Վարդալ ֆարմ» ՍՊԸ-ների*** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ***«Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ», «Ջի Թի Սի» և «Վարդալ ֆարմ» ՍՊԸ-ների*** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ **Հավելված N2-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և **Հավելված 3-ը** (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) և որակավորման փաստաթղթերը գնահատել էլեկտրոնայի աճուրդի հրավերի պահանջներին համապատասխան:

1.2 Հիմք ընդունելով էլեկտրոնային գնահարման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և որակավորման փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Նազարյան |
| Գնահատող | Վ. Վահանյան |
| Գնահատող | Մ. Գալստյան |
| գնահատող | Հ. Ավետիսյան |
| Քարտուղար | Ա. Մաղաքյան |